

1.1.2. Հայաստանի ազգային հաշիվներում Ազգային հաշիվների համակարգ 2008-ի ներդրման մասին

ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը հիմք ընդունելով 2014 թվականի հոկտեմբերի 23-ին Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի միջև կնքված ԱՀՀ 2008-ի¹՝ որպես ազգային հաշիվների վիճակագրության կազմման նոր միջազգային ստանդարտի ներդրման նպատակով միջգերատեսչական համագործակցության վերաբերյալ համաձայնագրով ստեղծված ԱՀՀ 2008-ի ներդրման միջգերատեսչական հանձնաժողովի կողմից հաստատված ներդրման ազգային ռազմավարությունը, և 2015 թվականի գործողությունների ծրագրի 1-ին կետի դրույթներին համապատասխան, առկա տեղեկատվության հիման վրա վերանայել է եկամուտների օգտագործման (ծախսային) եղանակով 2012-2013 թվականների տարեկան և 2014 թվականի եռամսյակային և եկամուտների ձևավորման եղանակով 2013թ. ՀՆԱ ցուցանիշները:

Հիմնական մեթոդաբանական փոփոխությունները վերաբերել են սպառագինության ծախսերին (հրասայլերի, ինքնաթիռների, երկարաժամկետ օգտագործման ռազմական այլ օբյեկտների ձեռք բերման ծախսեր), որոնք, համաձայն ԱՀՀ 1993-ի, որակվում էին որպես պետական կառավարման հատվածի միջանկյալ սպառման ծախսեր, իսկ ըստ ԱՀՀ 2008-ի՝ որակվում են որպես հիմնական կապիտալի կուտակման ծախսեր: Սույն փոփոխության հետևանքով եկամուտների օգտագործման (ծախսային) եղանակով ՀՆԱ-ում պետական կոլեկտիվ սպառման ծախսերի անվանական ծավալը 2013թ. նվազել է 16.1 տոկոսով, իսկ իրական ծավալի ինդեքսը՝ 0.1 տոկոսային կետով²:

Մեթոդաբանական փոփոխություն է իրականացվել նաև կապված վերամշակման նպատակով ապրանքների արտահանման ու ներմուծման գործառնությունների գրանցման հետ, որի դեպքում վերոհիշյալ ապրանքները չեն ներառվում ապրանքների արտահանման և/կամ ներմուծման ծավալներում, սակայն դրանց վերամշակման արժեքը ներառվում է ծառայությունների արտահանման և/կամ ներմուծման ծավալներում: Եկամուտների օգտագործման եղանակով ՀՆԱ-ում սույն փոփոխությունը իրականացվել է վճարային հաշվեկշռի տվյալներին համապատասխան՝ կազմված ըստ Վճարային հաշվեկշռի ձեռնարկի 6-րդ խմբագրության (ՎՀՀ խմբ. 6): Սույն փոփոխության արդյունքում արտահանման ծավալները նվազել են 2.6 տոկոսով, ներմուծմանը՝ 1.4 տոկոսով, իսկ իրական ծավալի ինդեքսներն աճել են համապատասխանաբար 0.4 և 0.6 տոկոսային կետով:

ՀՀ եկամուտների օգտագործման եղանակով ՀՆԱ-ում համաձայն ԱՀՀ 2008-ի Կենտրոնական բանկի գործառնությունները որակվում են որպես ոչ շուկայական գործառնություններ և համարվում են պետական կոլեկտիվ սպառման ծախսեր: Սույն փոփոխության հետևանքով եկամուտների օգտագործման (ծախսային) եղանակով ՀՆԱ-ում պետական կոլեկտիվ սպառման ծախսերի անվանական ծավալը 2013թ. աճել է 2.9 տոկոսով, իսկ իրական ծավալի ինդեքսը նվազել 1.5 տոկոսային կետով:

Իրականացվել է նաև ԱՀՀ 2008-ով նախատեսված ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայությունների (ՖՄԱՉԾ) ծավալի հաշվարկման մեթոդաբանության բարելավում: Եթե նախկինում տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերում ներառվում էին ֆիզիկական անձանց տրամադրված վարկերի դիմաց վճարված (հանած ավանդների դիմաց ստացված տոկոսային եկամուտներ) գուտ տոկոսային ծախսերը, ապա ըստ ԱՀՀ 2008-ի, տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերում ներառվում են միայն սպառողական

¹ ԱՀՀ 2008-ը պատրաստվել և հրատարակվել է միջազգային 5 կազմակերպությունների (Եվրոստատ, ԱՄՆ, ՏՀԶԿ, ՄԱԿ-ի վիճակագրական բաժին և ՄԱԿ-ի քարտուղարության տարածաշրջանային հանձնաժողովներ, ՀԲ) հովանու ներքո և 2009թ. փետրվարին Լյու-Յոքոբում կայացած ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի 40-րդ նստաշրջանում ընդունվել որպես համընդհանուր ստանդարտ: Տե՛ս նաև ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայքէջ՝ <http://www.armstat.am/file/doc/99475843.pdf> :

² 2012-2013թթ. ՀՆԱ հաշվարկներն իրականացվել են հաշվետու տվյալների համաձայն, իսկ 2014թ. տվյալները վերանայվել են 2013թ. համապատասխան հաշվետու տվյալների հիման վրա:

և հիփոթեքային վարկերի դիմաց վճարված (հանած ավանդների դիմաց ստացված տոկոսային եկամուտներ) գուտ տոկոսային ծախսերը: Սույն փոփոխության արդյունքում նվազել է 2013թ. տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերի անվանական ծավալը 1.3 տոկոսով և իրական ծավալի ինդեքսը՝ 0.1 տոկոսային կետով:

ԱՀՀ 2008-ին համապատասխան կազմված ՀՆԱ-ում կատարելագործվել է նաև սեփական կացարանում բնակվելու պայմանականորեն հաշվարկվող վարձակալության արժեքի հաշվարկման մեթոդաբանությունը՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) կողմից մշակված «սպառողի ծախսերի մեթոդի» հիման վրա, ինչպես նաև ներառվել են անօրինական գործունեության գնահատականները՝ կապված տնային տնտեսությունների կողմից թմրամիջոցների սպառման հետ: Մասնավորապես, տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերի անվանական ծավալը սեփական կացարանում բնակվելու պայմանականորեն հաշվարկվող վարձակալության արժեքի փոփոխության արդյունքում 2013 թվականին ավելացել է 6.1 տոկոսով, թմրամիջոցների սպառման ներառման արդյունքում՝ 0.3 տոկոսով, իսկ իրական ծավալի ինդեքսը առաջինի դեպքում նվազել է 0.4 տոկոսային կետով, իսկ երկրորդի դեպքում՝ էական ազդեցություն չի կրել: Զգալի ազդեցություն չի ունեցել նաև թմրամիջոցների ներմուծման գնահատականի ներառումը ներմուծման ծավալներում ոչ անվանական, ոչ էլ իրական առումով:

Մյուս կարևոր փոփոխությունն առնչվում է հետազոտությունների և մշակումների հետ կապված ծախսերին, որոնք, ըստ ԱՀՀ 2008-ի, որակվում են որպես հիմնական կապիտալի կուտակման ծախսեր՝ ԱՀՀ 1993-ով որպես միջանկյալ սպառման ծախսեր որակելու փոխարեն: Սույն փոփոխությունը հանգեցրել է 2013 թվականի հիմնական միջոցների համախառն կուտակման անվանական ծավալի աճի 1.3 տոկոսով և իրական ծավալի ինդեքսի նվազման 0.1 տոկոսային կետով: Սույն փոփոխության արդյունքում նվազել է պետական կոլեկտիվ սպառման ծախսերի անվանական ծավալը 1.8 տոկոսով, իսկ իրական ծավալի ինդեքսը ավելացել է 0.5 տոկոսային կետով: Արտադրական եղանակով ՀՆԱ-ում պետական կառավարման գործունեության մեջ հաշվառված վճարովի ծառայություններն ինչպես նախկինում, այնպես էլ ըստ ԱՀՀ 2008-ի, չեն ներառվում պետական սպառման ծախսերում:¹

Վերոնշյալ բաղադրիչների ազդեցության ամփոփ գնահատականները ներկայացված են ստորև.

¹ ԱՀՀ 2008-ով նախատեսված բոլոր մեթոդաբանական փոփոխությունները զետեղված են ԱՀՀ 2008 ձեռնարկի Հավելված 3-ում (տե՛ս նաև ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայքէջ՝ <http://www.armstat.am/file/doc/99475843.pdf>):

**ՀՆԱ ծախսային բաղադրիչների անվանական ծավալի և իրական ծավալի ինդեքսի փոփոխությունները
ԱՀՀ 2008-ի հիմնական մեթոդաբանական փոփոխությունների արդյունքում**

անվանական ծավալի փոփոխությունը, %

	Տնային տնտեսությունների վերջնական սպառում			Պետական հիմնարկների, որոնք բավարարում են կոլեկտիվ պահանջմունքները			Հիմնական միջոցների համախառն կուտակում			Արտահանում			Ներմուծում		
	2012	2013	2014	2012	2013	2014	2012	2013	2014	2012	2013	2014	2012	2013	2014
Սպառազինության ծախսեր				-16.6	-16.1	-15.2	5.5	6.9	7.5						
Ապրանքներ վերամշակման համար և ՎՀԶ խմբ.2-ի այլ փոփոխություններ										-3.3	-2.6	-3.5	-2.0	-1.4	-2.2
ԿԲ թողարկում				4.6	2.9	3.5									
ՖՄԱԶԾ	-1.3	-1.3	-1.5												
Սեփական կացարանում բնակվելու պայմանականորեն հաշվարկված վարձակալության արժեք	6.7	6.1	6.3												
Հետազոտություններ և մշակումներ				-2.2	-1.8	-1.5	1.3	1.3	1.3						
Անօրինական գործունեություն (թմրանյութերի սպառում և ներմուծում)	0.3	0.3	0.3							0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
Ընդամենը փոփոխություններ	5.7	5.1	5.1	-14.2	-15.0	-13.2	6.8	8.2	8.8	-3.3	-2.6	-3.5	-2.0	-1.4	-2.2

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

իրական ծավալի ինդեքսի փոփոխությունը, տոկոսային կես

	Տնտեսությունների վերջնական սպառում		Պետական հիմնարկների, որոնք բավարարում են կոլեկտիվ պահանջումները		Հիմնական միջոցների համախառն կուտակում		Արտահանում		Ներմուծում	
	2013	2014	2013	2014	2013	2014	2013	2014	2013	2014
Սպառագիծային ծախսեր			-0.1	1.3	1.1	0.4				
Ապրանքներ վերամշակման համար և ՎՀՀ խմբ.2-ի այլ փոփոխություններ							0.6	-0.8	0.4	-0.7
ԿԲ թողարկում			-1.5	0.9						
ՖՄԱԶԾ	-0.1	-0.1								
Սեփական կացարանում բնակվելու պայմանականորեն հաշվարկված վարձակալության արժեք	-0.4	-0.1								
Հետազոտություններ և մշակումներ			0.5	0.4	-0.1	-0.1				
Անօրինական գործունեություն (թմրանյութերի սպառում և ներմուծում)	0.0	0.0					0.0	0.0	0.0	0.0
Ընդամենը փոփոխություններ	-0.5	-0.2	-1.1	2.6	1.0	0.3	0.6	-0.8	0.4	-0.7

Սկսած 2015 թվականից ՀՆԱ հաշվարկներն իրականացվում են ԱՀՀ 2008-ին համապատասխան:

2012-2014թթ. ՀՆԱ-ի տվյալների ներկայացումը եկամուտների օգտագործման (ծախսային) եղանակով՝ ըստ ԱՀՀ 2008 մեթոդաբանության

Աղյուսակ 1

	Ընթացիկ գներով, մլն. դրամ			ՀՆԱ-ի կառուցվածքը, %		
	2012թ.	2013թ.	2014թ.	2012թ.	2013թ.	2014թ.
Վերջնական սպառման ծախսեր	4 184 296.7	4 514 893.0	4 742 996.6	98.1	99.0	97.8
տնային տնտեսությունների	3 700 442.9	3 951 200.8	4 109 253.0	86.7	86.7	84.8
պետական հիմնարկների, որոնք բավարարում են	465 469.3	543 718.4	616 866.1	11.0	11.9	12.7
բնակչության անհատական պահանջումները	198 705.5	218 154.6	231 990.2	4.7	4.8	4.8
կոլեկտիվ պահանջումները	266 763.8	325 563.8	384 875.9	6.3	7.1	7.9
տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների	18 384.5	19 973.8	16 877.5	0.4	0.4	0.3
Համախառն կուտակում	1 080 605.1	1 014 246.0	1 020 226.9	25.3	22.3	21.0
հիմնական միջոցների համախառն կուտակում	1 006 835.0	966 365.3	971 045.3	23.6	21.2	20.0
նյութական շրջանառու միջոցների պաշարների փոփոխություն	73 770.1	47 880.7	49 181.6	1.7	1.1	1.0
Ապրանքների և ծառայությունների արտահանման և ներմուծման սայրո	-888 844.5	-903 744.9	-892 398.0	-20.8	-19.8	-18.4
արտահանում	1 176 123.3	1 291 939.2	1 379 303.8	27.6	28.4	28.5
ներմուծում	2 064 967.8	2 195 684.1	2 271 701.8	48.4	48.2	46.9
Վիճակագրական շեղում	-109 596.8	-69 755.9	-27 673.0	-2.6	-1.5	-0.4
Համախառն ներքին արդյունք	4 266 460.5	4 555 638.2	4 843 152.5	100.0	100.0	100.0

Աղյուսակ 2

	Նախորդ տարվա գներով, մլն. դրամ		Իրական ծավալի ինդեքսները նախորդ տարվա նկատմամբ, %	
	2013թ.	2014թ.	2013թ.	2014թ.
Վերջնական սպառման ծախսեր	4 252 579.5	4 566 191.1	101.6	101.1
տնային տնտեսությունների	3 732 813.9	3 971 020.2	100.9	100.5
պետական հիմնարկների, որոնք բավարարում են	500 902.3	578 748.9	107.6	106.4
բնակչության անհատական պահանջումները	206 433.9	209 340.6	103.9	96.0
կոլեկտիվ պահանջումները	294 468.4	369 408.3	110.4	113.5
տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների	18 863.3	16 422.0	102.6	82.2
Համախառն կուտակում	981 747.9	988 192.7	90.9	97.4
հիմնական միջոցների համախառն կուտակում	936 001.7	943 193.9	93.0	97.6
նյութական շրջանառու միջոցների պաշարների փոփոխություն	45 746.2	44 998.8	x	x
Ապրանքների և ծառայությունների արտահանման և ներմուծման սայրո	-744 760.7	-798 155.8	x	x
արտահանում	1 277 818.3	1 374 894.5	108.6	106.4
ներմուծում	2 022 579.0	2 173 050.3	97.9	99.0
Վիճակագրական շեղում	-84 115.8	-39 306.0	x	x
Համախառն ներքին արդյունք	4 405 450.9	4 716 922.0	103.3	103.5

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Աղյուսակ 3

2014թ. ՀՆԱ-ի տվյալների ներկայացումն ըստ եռամսյակների եկամուտների օգտագործման (ծախսային) եղանակով՝ ըստ ԱՀՀ 2008 մեթոդաբանության

ընթացիկ գներով, մլն.դրամ

	I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ
Վերջնական սպառման ծախսեր	903 676.6	1 010 300.1	1 381 214.3	1 447 805.6
տնային տնտեսությունների	791 626.1	880 286.4	1 195 481.7	1 241 858.8
պետական հիմնարկների, որոնք բավարարում են	108 996.0	126 340.5	181 023.6	200 506.0
բնակչության անհատական պահանջարկները	36 514.8	45 817.9	65 168.8	84 488.7
կոլեկտիվ պահանջարկները	72 481.2	80 522.6	115 854.8	116 017.3
տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների	3 054.5	3 673.2	4 709.0	5 440.8
Համախառն կուտակում	111 313.7	199 396.0	297 992.1	411 525.1
հիմնական միջոցների համախառն կուտակում	104 627.9	182 684.8	256 435.1	427 297.5
նյութական շրջանառու միջոցների պաշարների փոփոխություն	6 685.8	16 711.2	41 557.0	-15 772.4
Ապրանքների և ծառայությունների արտահանման և ներմուծման սայրո	-204 530.9	-209 605.6	-218 556.2	-259 705.3
արտահանում	282 748.5	309 287.7	408 872.7	378 394.9
ներմուծում	487 279.4	518 893.3	627 428.9	638 100.2
Վիճակագրական շեղում	6 415.6	32 294.5	-9 892.7	-56 490.4
Համախառն ներքին արդյունք	816 875.0	1 032 385.0	1 450 757.5	1 543 135.0

%-ով ՀՆԱ-ի նկատմամբ

	2014թ.			
	I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ
Վերջնական սպառման ծախսեր	110.7	97.9	95.2	93.9
տնային տնտեսությունների	96.9	85.3	82.4	80.5
պետական հիմնարկների, որոնք բավարարում են	13.4	12.2	12.5	13.0
բնակչության անհատական պահանջարկները	4.5	4.4	4.5	5.5
կոլեկտիվ պահանջարկները	8.9	7.8	8.0	7.5
տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների	0.4	0.4	0.3	0.4
Համախառն կուտակում	13.6	19.3	20.6	26.7
հիմնական միջոցների համախառն կուտակում	12.8	17.7	17.7	27.7
նյութական շրջանառու միջոցների պաշարների փոփոխություն	0.8	1.6	2.9	-1.0
Ապրանքների և ծառայությունների արտահանման և ներմուծման սայրո	-25.1	-20.3	-15.0	-16.9
արտահանում	34.6	30.0	28.2	24.5
ներմուծում	59.7	50.3	43.2	41.4
Վիճակագրական շեղում	0.8	3.1	-0.8	-3.7
Համախառն ներքին արդյունք	100.0	100.0	100.0	100.0

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Աղյուսակ 3.1

նախորդ տարվա միջին տարեկան գներով, մլն.դրամ

	2014թ.			
	I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ
Վերջնական սպառման ծախսեր	872 429.9	985 178.0	1 354 848.8	1 353 734.4
տնային տնտեսությունների	758 588.1	854 450.6	1 181 889.6	1 176 091.9
պետական հիմնարկների, որոնք բավարարում են	110 830.8	127 152.9	168 290.3	172 474.9
բնակչության անհատական պահանջարկները	35 994.8	44 586.5	59 604.0	69 155.3
կոլեկտիվ պահանջարկները	74 836.0	82 566.4	108 686.3	103 319.6
տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների	3 011.0	3 574.5	4 668.9	5 167.6
Համախառն կուտակում	110 114.1	195 482.5	285 912.1	396 684.0
հիմնական միջոցների համախառն կուտակում	103 737.0	180 187.6	248 197.8	411 071.5
նյութական շրջանառու միջոցների պաշարների փոփոխություն	6 377.1	15 294.9	37 714.3	-14 387.5
Ապրանքների և ծառայությունների արտահանման և ներմուծման սայդո	-189 007.9	-188 572.3	-187 979.7	-232 595.9
արտահանում	283 039.3	309 671.8	412 883.7	369 299.7
ներմուծում	472 047.2	498 244.1	600 863.4	601 895.6
Վիճակագրական շեղում	-5 355.3	4 687.9	3 625.5	-42 264.1
Համախառն ներքին արդյունք	788 180.8	996 776.1	1 456 406.7	1 475 558.4

իրական ծավալի ինդեքսներն ըստ եռամսյակների, 2013=100¹, %

	2014թ.			
	I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ
Վերջնական սպառման ծախսեր	77.3	87.3	120.0	119.9
տնային տնտեսությունների	76.8	86.5	119.6	119.1
պետական հիմնարկների, որոնք բավարարում են	81.5	93.5	123.8	126.9
բնակչության անհատական պահանջարկները	66.0	81.8	109.3	126.8
կոլեկտիվ պահանջարկները	91.9	101.4	133.5	126.9
տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների	60.3	71.6	93.5	103.5
Համախառն կուտակում	43.4	77.1	112.8	156.4
հիմնական միջոցների համախառն կուտակում	42.9	74.6	102.7	170.2
նյութական շրջանառու միջոցների պաշարների փոփոխություն	x	x	x	x
Ապրանքների և ծառայությունների արտահանման և ներմուծման սայդո	x	x	x	x
արտահանում	87.6	95.9	127.8	114.3
ներմուծում	86.0	90.8	109.5	109.7
Վիճակագրական շեղում	x	x	x	x
Համախառն ներքին արդյունք	69.2	87.5	127.9	129.6

¹ Միջին եռամսյակային

2013թ. եկամուտների ձևավորման հաշիվն ըստ ԱՀՀ 2008 մեթոդաբանության
(ՏԳՏՀՂ Խմբ. 2)

ընթացիկ գներով, մլն դրամ

	ՌԵՍՈՒՐՍՆԵՐ	ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ					
		համախառն ավելացված արժեք	վարձու- աշխա- տողների աշխա- տանքի վարձա- տրություն	արտադ- րության այլ զուտ հարկեր	համա- խառն շահույթ և համա- խառն խառը եկամուտ- ներ	այդ թվում՝	
						հիմնա- կան կապի- տալի սպառում	տնտեսու- թյան զուտ շահույթ և զուտ խառը եկամուտ- ներ
A	Գյուղատնտեսություն, անտառային տնտեսու- թյուն և ձկնորսություն	839 821.1	127 193.1	8 758.9	703 869.1	84 444.3	619 424.8
B	Հանրագործական արդյու- նաբերություն և բացա- հանքերի շահագործում	102 686.8	60 792.0	5 590.8	36 304.0	25 944.1	10 359.9
C	Մշակող արդյունաբե- րություն	441 103.1	173 130.9	12 158.8	255 813.4	43 135.2	212 678.2
D	Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	183 232.0	84 135.7	2 665.2	96 431.1	39 885.8	56 545.3
E	Զրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում	13 181.7	8 117.3	1 174.2	3 890.2	3 575.0	315.2
F	Շինարարություն	476 564.0	220 950.1	3 572.2	252 041.7	31 667.4	220 374.3
G	Մեծածախ և մանրածախ առևտուր. ավտոմեքենա- ների և մոտոցիկլների նորոգում	548 613.3	183 249.9	10 598.9	354 764.5	43 984.6	310 779.9
H	Փոխադրումներ և պա- հեստային տնտեսություն	120 135.6	69 167.3	6 784.8	44 183.5	39 928.7	4 254.8
I	Կացության և հանրային աննդի կազմակերպում	44 336.4	19 970.2	5 141.6	19 224.6	3 598.6	15 626.0
J	Տեղեկատվություն և կապ	150 997.3	73 313.7	2 985.3	74 698.3	50 648.3	24 050.0
K	Ֆինանսական և ապահո- վագրական գործունեու- թյուն	182 900.3	71 712.7	908.6	110 279.0	14 892.9	95 386.1
L	Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	370 966.7	24 655.9	7 616.0	338 694.8	156 543.0	182 151.8
M	Մասնագիտական, գիտական և տեխնիկա- կան գործունեություն	45 910.2	29 367.6	1 617.2	14 925.4	1 510.3	13 415.1
N	Վարչարարական և օժանդակ գործունեություն	38 423.3	12 962.6	368.5	25 092.2	1 014.9	24 077.3
O	Պետական կառավարում և պաշտպանություն. պարտ ադիր սոցիալական ապահովագրություն	183 798.9	162 107.9	152.2	21 538.8	11 947.2	9 591.6
P	Կրթություն	129 879.6	119 562.3	151.9	10 165.4	8 795.4	1 370.0
Q	Առողջապահություն և բնակչության սոցիալա- կան սպասարկում	174 765.7	62 313.9	684.1	111 767.7	14 307.5	97 460.2
R	Մշակույթ, զվարճություն- ներ և հանգիստ	61 190.0	19 590.2	11 399.1	30 200.7	1 828.7	28 372.0
S	Սպասարկման այլ ծառայություններ	29 288.0	12 107.2	978.3	16 202.5	2 893.0	13 309.5
T	Տնային տնտեսություն- ների գործունեություն որպես գործատու. տնային տնտեսություններում չտարբերակված ապրանք- ների և ծառայությունների արտադրություն սեփա- կան սպառման համար	2 988.1	2 988.1	-	-	-	-
	ՖՄԱԶՕ	-91 572.0	-	-	-91 572.0	-	-91 572.0
	Ավելացված արժեք (համախառն, հիմնական գներով)	4 049 210.1	1 537 388.6	83 306.6	2 428 514.9	580 544.9	1 847 970.0

2013թ. եկամուտների ձևավորման հաշիվի կառուցվածքն ըստ ՏԳՏՀԴ Խմբ. 2

%

	ՌԵՍՈՒՐՍԵՐ	ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ					
		համախառն ավելացված արժեք	վարձու աշխա- տողների աշխա- տանքի վարձա- տրություն	արտադ- րության այլ զուտ հարկեր	Համա- խառն շահույթ և համա- խառն խառը եկամուտ- ներ	այդ թվում	
						Հիմնա- կան կապի- տալի սպառում	տնտեսու- թյան զուտ շահույթ և զուտ խառը եկամուտ- ներ
A	Գյուղատնտեսություն, անտառային տնտեսու- թյուն և ձկնորսություն	100.0	15.1	1.0	83.9	10.1	73.8
B	Հանքագործական արդյու- նաբերություն և բացա- հանքերի շահագործում	100.0	59.2	5.4	35.4	25.3	10.1
C	Մշակող արդյունաբե- րություն	100.0	39.2	2.8	58.0	9.8	48.2
D	Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	100.0	45.9	1.5	52.6	21.8	30.8
E	Զրամատակարարում, կո- յուղի, թափոնների կառա- վարում և վերամշակում	100.0	61.6	8.9	29.5	27.1	2.4
F	Շինարարություն	100.0	46.4	0.7	52.9	6.7	46.2
G	Մեծածախ և մանրածախ առևտուր. ավտոմեքե- նաների և մոտոցիկլների նորոգում	100.0	33.4	1.9	64.7	8.0	56.7
H	Փոխադրումներ և պա- հեստային տնտեսություն	100.0	57.6	5.6	36.8	33.2	3.6
I	Կացության և հանրային սննդի կազմակերպում	100.0	45.0	11.6	43.4	8.1	35.3
J	Տեղեկատվություն և կապ	100.0	48.6	2.0	49.4	33.5	15.9
K	Ֆինանսական և ապահո- վագրական գործունեու- թյուն	100.0	39.2	0.5	60.3	8.1	52.2
L	Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	100.0	6.6	2.1	91.3	42.2	49.1
M	Մասնագիտական, գիտա- կան և տեխնիկական գործունեություն	100.0	64.0	3.5	32.5	3.3	29.2
N	Վարչարարական և օժանդակ գործունեություն	100.0	33.7	1.0	65.3	2.6	62.7
O	Պետական կառավարում և պաշտպանություն. պարտա դիր սոցիալական ապահովագրություն	100.0	88.2	0.1	11.7	6.5	5.2
P	Կրթություն	100.0	92.1	0.1	7.8	6.8	1.0
Q	Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում	100.0	35.6	0.4	64.0	8.2	55.8
R	Մշակույթ, զվարճություն- ներ և հանգիստ	100.0	32.0	18.6	49.4	3.0	46.4
S	Սպասարկման այլ ծառայություններ	100.0	41.3	3.4	55.3	9.9	45.4
T	Տնային տնտեսությունների գործունեություն որպես գործատու. տնային տնտե- սություններում չտարբե- րակված ապրանքների և ծառայությունների ար- տադրություն սեփական սպառման համար	100.0	100.0	-	-	-	-
	ՖՄԱՉԾ	100.0	-	-	100.0	-	100.0
	Ավելացված արժեք (համախառն, հիմնական գներով)	100.0	38.0	2.1	59.9	14.3	45.6

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

շարունակություն, %

		ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ					
		ՌԵՍՈՒՐՍՆԵՐ համախառն ավելացված արժեք	վարձու- աշխա- տողների աշխա- տանքի վարձա- տրություն	արտադ- րության այլ զուտ հարկեր	Համա- խառն շահույթ և համա- խառն խառը եկամուտ- ներ	այդ թվում	
						Հիմնա- կան կապի- տալի սպառում	տնտեսու- թյան զուտ շահույթ և զուտ խառը եկամուտ- ներ
A	Գյուղատնտեսություն, անտառային տնտեսու- թյուն և ձկնորսություն	20.8	8.3	10.5	29.0	14.5	33.5
B	Հանքագործական արդյու- նաբերություն և բացա- հանքերի շահագործում	2.5	3.9	6.7	1.5	4.5	0.6
C	Մշակող արդյունաբե- րություն	10.9	11.3	14.6	10.5	7.4	11.5
D	Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	4.5	5.5	3.2	4.0	6.9	3.1
E	Ջրամատակարարում, կո- յուղի, թափոնների կառա- վարում և վերամշակում	0.3	0.5	1.4	0.2	0.6	0.0
F	Շինարարություն	11.8	14.4	4.3	10.4	5.4	11.9
G	Մեծածախ և մանրածախ առևտուր. ավտոմեքենա- ների և մոտոցիկլների նորոգում	13.6	11.9	12.7	14.6	7.6	16.8
H	Փոխադրումներ և պահես- տային տնտեսություն	3.0	4.5	8.2	1.8	6.9	0.2
I	Կացության և հանրային սննդի կազմակերպում	1.1	1.3	6.2	0.8	0.6	0.9
J	Տեղեկատվություն և կապ	3.7	4.8	3.6	3.1	8.7	1.3
K	Ֆինանսական և ապահո- վագրական գործունեու- թյուն	4.5	4.7	1.1	4.5	2.6	5.2
L	Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	9.2	1.6	9.1	14.0	27.0	9.9
M	Մասնագիտական, գիտա- կան և տեխնիկական գործունեություն	1.1	1.9	1.9	0.6	0.3	0.7
N	Վարչարարական և օժանդակ գործունեություն	1.0	0.8	0.4	1.0	0.2	1.3
O	Պետական կառավարում և պաշտպանություն. պարտ ադիր սոցիալական ապա- հովագրություն	4.5	10.5	0.2	0.9	2.0	0.5
P	Կրթություն	3.2	7.8	0.2	0.4	1.5	0.1
Q	Առողջապահություն և բնակչության սոցիա- լական սպասարկում	4.3	4.0	0.8	4.6	2.5	5.3
R	Մշակույթ, զվարճու- թյուններ և հանգիստ	1.5	1.3	13.7	1.2	0.3	1.5
S	Սպասարկման այլ ծառայություններ	0.7	0.8	1.2	0.7	0.5	0.7
T	Տնային տնտեսություն- ների գործունեություն որպես գործատու. տնային տնտեսություններում չտարբերակված ապրանք- ների և ծառայությունների արտադրություն սեփա- կան սպառման համար	0.1	0.2	-	-	-	-
	ՖՄԱԶՕ	-2.3	-	-	-3.8	-	-5.0
	Ավելացված արժեք (համախառն, հիմնական գներով)	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0